7. ՆԱԽՐՈՐԴ

Ժամանակին մե նախրորդ մը կար։ Ինք էր ուր կնիկ ու էրկու պզտիկ տղեկներ։ Ուրին մե խորոտիկ կնիկ մե կեր։ Մե բազրկան բաշի մեկ օր էկավ դետի հ'ընցավ։ Աչք առնելուն՝ շատ էդ կնիկ սիրեց։

Կնկան ասեց թե.—Արի՛ իմ հետ տուրուառ։

Կնիկ էդ բան չուզեց։

Իրիկուն նախրորդ նախրից էկավ։ Կանչեց բազրկան բաշին զնախրորդ, տարավ ուր մոտ։

Ըսեց.—Հինդ օսկի փարա կիտամ քզիկ, իտա գիշեր գնա գեղ մը ու դարցի արի։

Խափոդեց խեղճ նախրորդին ու ճամբեց, գնաց էդ գեղ։

Դառնանք բազրկան բաշու վրեն։ Բազրկան բաշին էկավ նախրորդի տուն, բռնեց էրկու տղեն դրեց թունդիր. թունդիր լուսվան թունդիր պաղ էր, տղեք չիրիցան։ Բազրկան բաշին վերցուց էդ նախրորդի կնիկ ու գնաց։ Տարավ, դրեց սանդուկի մը մեջ ու էլավ էդ գեղեն ու գնաց։

Թող բազրկան ուր ճամբի հետ էրթա, դառնանք մեր նախրորդի գլխով գալածի վրեն։ Նախրորդ էկավ տուն, տեսավ օր թե կնիկ չկա։ Թունդրան բերան բացեց, տեսավ ուր էրկու տղեն են մեջին։ Վերցուց մեկ շալկեց, մեկէլ ձեռք բռնեց ու ճամբու հետ գացին։

Շատ գացին, քիչ գացին, մեկ մեծ գետու մը ռաստ էկան։

Պստիկ տղեն դրեց գետին ու մեծ շալկեց ու գետու մեջ տվեց։ Գնաց մինչև գետու կես, գետը շատ էր, ֆըլըտավ ուր պառիկեն ու ընկավ գնաց գետու հետ։ Խեղճ նախրորդ դարձավ հ՝ետևանց աչքեց։ Հընչի դարձավ հ՝ետևանց, դել էկավ գետու պռկեն վերցուց ղէն պստիկ տղեն ու փախավ։ Հիմա մեկ տղեն ջուր տարավ, մեկ լէ գել տարավ։ Գել ճամբախ գնաց։ Մե հովիվ տեսավ. օր գել էկավ, աղեն հընդիկ բերան ա. շներով լարեց, էդ տղեն գելու բերնեն փըրծուց, տարավ էնեց ուրին տղա։

Դառնանք մեկել տղի վրեն։ Էդ տղեն էդ ջուր կտանի, էրթա, կէրթա էլնի ջաղջի վաք։ Ջաղջըպան կէլնի տեսնա օր մե տղե մը ջաղջի վաք։ Կբերե զէդ տղեն կընե ուրին տղա։

Դառնանք մեր խեղճ նախրորդի վրեն։ Նախրորդ կասե.—Թե կնիկ գնաց, էրկու տղեն էլ գացին, ապա ես իմ հալ իմա՞լ էնիմ։ Ու ինք էլ թորկեց ու քաղքընից գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, էնի աստված դինա, գնաց մե թագավորի մը քաղաք դյուս էկավ։

Էդ քաղաք դյուս գալուն, թագավոր մեռեր էր։ Էլան գավլաթ ղուշի թորկեցին, ըսեցին էդա դավլաթ ղուշին որ մեկի գլխին դրեց, էնի թագավոր կէնինք։ Թորկելու պես էկավ, էդ նախրորդի գլուխ դրեց։ Բռնեցին զդավլաթ ղուշին նախրորդի գլխեն վերցուցին, մեկ լէ թորկեցին, էկավ էմլա նախրորդի գլխուն դրեց։ Բըռնին զնախրորդ տարան մտցին մեկ տուն։ Դուռ փակեցին ու էկան գավլաթ ղուշին թորկեցին։ Դավլաթ ղուշին օլորդավ, օլորդավ, գնաց էրդկեն իջավ, դրեց նախրորդի գլխուն։

Գացին նախրորդ հանեցին, բերեցին։ Քոման էդ քաղաք, ըսեցին, թե՝ «Բալքի էդ մարդ բարի մարդ ա։ Էնինք մեզի թագավոր»։ Ու էնեցին թագավոր։ Էնիկ թըղ ուր թագավորութեն էնե։ Մենք դառնանք ջաղջըպընի տղին ու հովվի տղին։

Էրկուա լէ մեծցած ա։ Ուրանց ճըժերու հետ հոլ կխաղան։ Էրկուս մեկ գեղի մեջ ա։ Սիրահարված հըտ իրար։ Ուրանք չըն դինան, թե ախպեր ին, մենակ ընկեր։

Ավուր մը մեկ ճըժերուն կթփին։ Էն մեկ տղեն կվերցու կասա.—Ա՜խր, դու նախրորդի տղա իս, ճաղջըպան քզի վաքի բերան ա բռնի բերե։

Տղեն էդտեղ կհերսոտի ու կնստի մտածա։ Օր էմա՞լ է ընձի պապ չկա։

Դառնանք հովվի աղի վրեն։ Մեկ օր լէ հովվի տղին էմալ կըսեն։

Կըսեն.—Քղի պապ չկա։ Հովիվ քղիկ գելու բերնեն է բռնեբերե։

Ու տղեն լէ կնստի կմտածա, օր հովիվ ուրան պապ չէ։ Կէլնին էդ էրկու տղեն, խոսքեր կէնին մեկ ու ճամրու կընկնին ու կէրթան։ Շատ կէրթան, քիչ կէրթան, էդի աստված դինա։ Ավուր մը մեկ կէրթան ուրանց պապու քաղաք դյուս կէլնին, ուր օր թե ուրանց նախորդ պապ թագավոր էր։ Էդ ժամանակին, թագավոր ինք ուր հ'առաջի մարգերուն խոսաց թե.—Կրնանք էրկու հատ տղա ընձիկ գտնանք բերիք, մեկ ընձիկ իմ հ'առեջ խղմաթ կինա, մեկ լէ իմ խայլոն հ'ըլնա։

Գացին շարսուի մեջ տեղ։ Տեսան էդ նախորդի էրկու տղեն գտան, առան, էկան։

— Ահա, թագավոր ապրած, էրկու տղա քղիկ։ Գտանք ու բերինք։

Թե տեսնալուն պես թագավոր զէդ տղեկներ, իմալ օր թե զուր սիրտ ճղին ու էդ տղեկներ մտցուն մեջին։ Բայց թագավոր չգինա օր թե ուր տղեկներն ին։ Մինակ արուն ա իշթե կեռա։ Մինչև էդ ժամանակ լէ, էդ տղեկներ չըն դինա թե իրարու ախպեր ին։ Մեկ ամսվա մը շափ թագավորի հ'առեջ խղմաթ կէնին, թագավոր լէ տղեկներ լավ կպահա։

Դառնանք բաղրկան բաշու վրեն, տեսնանք ո՞ւր պտի գա էլնի դուրս։ Ավուր մը մեկ կիգա նախորդ թագավորի քաղաք դուրս կէլնի։ Թագավոր հրամանք էներ ա ուր խավաղներուն, թե որ մեկ մարդ օր խաբիբ կէղնի, թաժա քաղքի մեջ մտնալու, ընձիկ կբռնիք կբերիք։ Բռնեցին խավաղներ բաղրկան բաշուն, տարան թագավորի մոտ։ Թագավորին խոսաց, թե.—Իմ բաղրկան ծանդր աւ էրկու լավ մարդ կիտաք, թե որ իմ բաղրկան պահին, չէղնի գողնանն»։

Թագավոր լէ կըսե.—Լավ մարդ, օր թե կա, իգի իմ հ'առաջու մըշկընեն ին։ Կէլնի էդ էրկուս կճամբա, կէրթան բաղրկանի հ'առեջ օր պահին։ Բաղրկան պտի թագավորի քով մնա։ Մինչև առավոտուն ու էլնի առավոտ էրթա բառնա զուր բաղրկան ու էրթա։

Դառնանք տղեկներու վրեն։ Տղեկներ կէրթան ուրանց պառեկ զարկին սանդուխի մը, կասին.—Քըլե հ'էսօր մղիկ հեքիաթ մեր գլխուն գալած էսինք, օր գիշեր հ'ընցուցինք։

Ջոջ տղեն ըսեց.—Իմ գլխու գալած ըսիմ։ Մենք էրկու ախպեր ենք։ Մեկ մամ, մեկ պապ՝ օր նախրորդ էր։ Մեկ օր էկավ բազրական բաշի մը։ Բռնեց զիս ու զիմ ախպեր մտուց թունդիր։ Բազրական առավ իմ մամ ու գնաց։ Իմ պապ էկավ օր իմ մամ հ՚ոդի չէ։ Շալկեց իմ պզտիկ ախպեր ու ես լէ քելեցի։ Գացինք մե շատ դիտու մը մեջ, զարկեցինք, ջուր խլեց ընձի տարավ գնաց ու գելն լէ իմ ախպերն է տարե։

Պզտիկ ախպեր գրկվավ ջոջ ախպոր վիզ, թե դու իմ ախպերն իս ու գրկվան, ճանչցան զիրար։ Ուրանց մամ, օր շաքմաշի մեջն էր, ուրանց հեքիաթներ հասկցավ, էն էլ ըսեց թե.—Էդա իմ տղեկներն ին։

Էլավ սանդուխ կոտրեց ու սանդրխի մեջեն դուս էկավ։ Գրրկվավ տղեկներու վիզ, պագեց, թե.—Ես լէ ձեր մամն իմ։

Թալեցին տեխ ըդ իրեք միասին պառկան։ Թև մը մեկ տզի վզին ա թալեր ա, մեկ լէ՝ մեկէլ տզի վզին ա թալեր ա։ Մեկ ծիծ մեկ տղեն ա գրկեր ա, մեկէլ ծիծ մեկէլ տղեն ա գրկեր ա։

Դառնանք բազրկան բաշու վրեն։ Լուսուն բազրկան բաշին պիտի գա, օր թե բազրկներ պիտի բառնա։ Կիգա տեսնա օր թե մեկ տղեն մեկ կուշտն ա պառկուկ, մեկէլ տղեն մեկ կուշտն ա պառկուկ։

Կդառնա կիգա թագավորին խոսա.—Ջքու լավ մշկրներ ինձի ճամբեցիր բազրկան պահելու, իմ շաքմաշեն կոտրած ա, իմ կնիկ ուրնէ հանած ա կուշտ մը մեկն ա պառկե, կուշտ մը լէ՝ մեկն ա պառկե։

Թագավոր խավազներ կճամբա։ Կըսե.—Գացե՛ք էդ էրկու տըղեն բերեք։ Ուրանց վզեր կտրենք։

Խավազներ օր էկան էդ տղեկներ տարան, ուրանց մամ լէ ընկավ հետ ու գնաց։

Թագավորի մոտ օր հասան, թագավոր ըսեց.—Հա՛յդե, շալա՛դ։

Ջալադչին էկավ օր պտի տղեկներու վիզ զարկա։ Մամ թալվավ թագավորի օտներուն, ըսեց.—Թագավո՛ր ապրած, էս էրկուս իմ տղեկներն ին։

Թագավորի սիրտ քրքրվավ, հարցում էրաց, թե իմա՚լ քու տղեքներն ա, տեսնանք։

Ըսեց թե՝ «էս գիշեր էդ էրկու տղեք ուրանց գլխու գալած ըսեցին օր նախրորդի տղեկներն ին։ Ես լէ նախրորդի կնիկն իմ։ Բա-

զրրկան բաշին ընձիկ փախցուց, դրեց չաքմաջի մեջ։ Հ՚ըսօր ես իմ տղեկներ գտեր իմ։

Թագավոր հրաման կէնա, կըսե.—Հա՛յդե, բազրկան բաշին՝ շալադ,—կտրին բազրկան բաշու վիզ։

Թագավոր կնկան ըսեց.—Թե օր էմալ ա, դու իմ կին ես, ես լէ նախրորդն իմ։ Ուրան կնիկն էրավ թագու, ուր տղեկներն լէ թագավորի տղա։ Նոր վայլեցին թագավորութին։